

## ՏՆՕՐԵՆԻՆ ԽՕՍՔԸ

Հարուածներ «Հուսկ բանք»-էն

... Եթէ անցնող տարին փորձենք գոյներով ներկայացնել, պիտի անճրկինք, որովհետեւ սեւն ու մոխրագոյնն է, որ իշխեցին մեր կեանքին մէջ: Սեւը արդիւնք էր մեր կորուստներուն, իսկ մոխրագոյնը՝ մեր կեանքի միապաղաղութեան: Գոյնը, եթէ իբրեւ բնական երեւոյթ մնաց տեսանելի մեր աչքերուն, ապա իբրեւ զգացողութիւն՝ պակսեցաւ մեր հոգիներէն ու սիրտերէն:

Իսկ մենք պէտք ունինք գոյնի, որովհետեւ գոյնը գեղեցիկ է, գոյնը ուրախ է, գոյնը սիրելի է: Վերջին շրջանին չար մարդիկ եւ չար պատահարներ մեր հոգիներէն փորձեցին խլել գոյնը. նաւահանգիստի պայթումը սեւով պատեց մեր յոյսերը, արցախեան պատերազմը խաւարեց մեր սիրտը, համավարակը մոխրագոյնով մշուշեց մեր առօրեան, վախերը խլեցին մեր գունագարդ յարաբերութիւնները:

Իրականութիւնը որքան ալ առարկայական ճշմարտութիւն ըլլայ, նոյնքան ալ ըմբռնում է, ընկալում է (perception): Այս մանուկներով, պատանիներով ու երիտասարդներով մենք կը մերժենք ընդունիլ մեզի պարտադրուած սեւն ու մոխրագոյնը: Մոխրագոյն մարդիկ ու սեւ խիղճներ քանդեցին մեր եկեղեցիին գունաւոր խաչը: Բայց մենք վերականգնեցինք ատիկա, որ խաչով մեր կեանքերը գունաւորուին:

Սիրելի շրջանաւարտներ, դուք էք մեր կեանքի գոյնը: Ձեզ հոս հասցնող ջանքը գունագարդեց ձեր կեանքը: Մի՛ ձգէք, որ չար մարդիկ խլեն գոյնը ձեր երազներէն: Կեանքի պաստառը ձեզմով պիտի շարունակուի նկարուիլ. եթէ դուք ձեր կեանքերը մոխրագոյն տեսնէք, եթէ թոյլ տաք որ մարդիկ ձեզ միագոյն ներկեն, կեանքն ալ կը կորսնցնէ իր գոյնը, իսկ գոյնը գեղեցիկ է, գոյնը ուրախ է, գոյնը մանաւանդ... սիրելի է:

Սիրոյ ու սիրող Աստուածը գոյնով օժտեց ո՛չ միայն մեզ շրջապատող առարկայական աշխարհը, այլեւ մեր նկարագիրները, մեր հոգիները, որպէսզի կեանքը որ ինք տուաւ մեզի, ըլլայ գունաւոր՝ այսինքն գեղեցիկ, ուրախ, սիրով լեցուն:

Քանի մը տարի համալսարան, յետոյ կեանքի պայքար: Սեւն ու մոխրագոյնը միշտ պիտի ընկերանան ձեզի, սակայն ձեր ձեռքն է տխուր պաստառներուն վրան գունաւոր ծաղիկներ, սրտիկներ, ժպտիկներ եւ մանաւանդ խաչեր գծել, որովհետեւ գերագոյն սիրոյ նշանը խաչն է:



Մշուակողը՝ Կ. Եկեղեցիի վերանորոգումը պատկերող խաչը

1988-ի շրջանաւարտ վեր. Հրայր Չոլագեան 30 Յունիս 2021-ին ւարտելով Հայ աւետ. Ա. եկեղեցիի իր հովուական ծառայութիւնը յաջորդ օրն իսկ ստանձնեց Էջրէֆիէի Հայ աւետ. եկեղեցիի հովիւի պարտականութիւնը: Այդ առթիւ եկեղեցւոյ պատկան մարմինները եւ դպրոցի հոգաբարձութիւնը զինք պատուեցին յուշանուէրներով:



Վերապատուելիին եւ երեցկին տիկին Կարինէ Չոլագեանին հրաժեշտի ձեռնարկ մը կազմակերպած էր նաեւ դպրոցի ուսուցչակազմը: Տիկին Կարինէ դպրոցէն ներս ծառայած է իբրեւ հոգեւոր տեսուչ: Ան նաեւ Ծնողաց մարմինի ատենապետուիին է:

...

Վեր. Չոլագեանի մեկնումով, Հայ աւետ. Ա. եկեղեցիի հովութիւնը կը ստանձնէ պատուելի Ժիրայր Ղազարեան, որուն կը մաղթենք բարի գալուստ եւ արդիւնաբեր գործակցութիւն:





## 2020-21-Ի ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ

Ա. շարք (ծախեն աջ) -

ՍԵՐԼԻ ԲԵՕՇԿԵՐԵԱՆ  
ՍԵԼԻՆ ՀԱՍՍՈՒՏ  
ԼԻԱ ԳԵՈՐԳԵԱՆ  
ԱՅԳ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ  
ԵԱՐԱ ԵՈՒԼԵՍ

Բ. շարք (ծախեն աջ) -

ԳԵՈՐԳ ՊՈՅԱՃԵԱՆ  
ՎԱՀԷ ՊՈՅՍՈՒՇԱԲԵԱՆ  
ՎԱՐԴՈՒԿ ՖԻԼԻԲԵԱՆ  
ՆԱՐԻՆԷ ՊԱՍՏԱՃԵԱՆ  
ՍԵՐԺ ԳԱՍԱՊԵԱՆ

**Ո**րբաթ, 25 Յունիսը երկար եւ ակնդէտ սպասուած ժամադրութիւն մը իրականացնող օրը եղաւ ՀԱԳ-ի համար: Անցեալ տարի, պարագաներու բերմամբ ամալերջի հանդէս չէր կատարուած, ուստի աշակերտները ձեռն ի սիրտ կը սպասէին այս օրուան, աղօթելով որ տիպա՞ն անակնկալ մը չխանգարէ ծրագիրը:

Փառք Աստուծոյ, այդ երեկոյ կրցանք գործադրել ՀԱԳ-ի 94-րդ արարտական հանդէսը, միացեալ ձեւաչափով, մասնակցութեամբ նաեւ անցեալ տարուան մանկապարտէզի ու նախակրթարանի ընթացաւարտներուն (2019-20-ի շրջանաւարտները անցեալ տարի արարողութեան մը ընթացքին ստացեր էին իրենց վկայականները):

ՄԱՀԱԵՄ նախագահին ու Կեդր. մարմինի ատենապետին, ինչպէս նաեւ Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ ու դպրոցի պատասխանատուներուն, ուսուցիչներու եւ ծնողաց ներկայութեամբ, ժամը 7:30-ին բակ մուտք գործեցին ասարտականները: Լիբանանի եւ Հայաստանի քայլերգերու ունկնդրութենէն ետք, վեր. Հրայր Չոլագեանի կողմէ Աստուածաշունչի ընթերցումով ու մատուցուած աղօթքով սկսաւ հանդէսը:

Տնօրէնը ներկայացուց եւ հրաւիրեց օրուան բանախօսը՝ վեր. Հրայր Չոլագեանը (1988-ի շրջ), որ հանդէսի յաջորդող օրերուն կ'արարտէր իր տասնամեայ ծառայութիւնը Հայ աւետ. Ա. եկեղեցիին մէջ՝ փոխադրուելով Էջմէֆիէի եկեղեցի:



### ՌԱՅՅԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Այգ Արզումանեան, Նարինէ Պաստաճեան, Սելին Համուտ եւ Եարա Եունես





2019-20-ի նախակրթարանի ընթացաւարտները



2020-21-ի նախակրթարանի ընթացաւարտները

Վերապատուելին կենդանի օրինակներով ներկայացուց իր զանազան առնչությունները ՀԱԳ-ին հետ, հրաւիրելով աշակերտները, որ իրեն պէս, իրենք ալ այստեղ գտնեն իրենց կեանքի տեսիլքը, ուղղութիւնը եւ կոչումը:

Յանուն դպրոցին, հոգաբարձութեան ատենապետ պարոն Ներսէս Պաղտոյեան յուշանուէր մը յանձնեց վերապատուելիին:

Գեղարուեստական բաժինով հանդէս եկան Նարեկ Չոլագեան, Վարդան Աւետեան եւ Այգ Արզումանեան՝ դաշնամուրի ելոյթներով, իսկ Լիանա Շահինեան ու Մարիա Էլմաճեան՝ ասմունքով:

53 ընթացաւարտներ եւ շրջանաւարտներ տնօրէնին ձեռամբ ստացան իրենց վկայականները, գերազանցիկները՝ նաեւ իրենց մրցանակները: Ռաֆֆի Մանուկեան մրցանակին (1000-ական

տոլար) արժանացան Այգ Արզումանեան (արտադասարանային գործունէութիւններ), Նարինէ Պաստաճեան (ուսումնական գերազանցութիւն), իսկ Եարա Եունէս եւ Սէլին Համմուտ բաժնեկցեցան տաղանդի մրցանակը, հայերէնի մէջ իրենց ցուցաբերած բացառիկ յառաջդիմութեան համար:

Յանուն շրջանաւարտներուն ուղերձներ կարդացին Նարինէ Պաստաճեան (արաբերէն) եւ Սէլին Համմուտ (հայերէն):

Աւարտին շրջանաւարտներուն իր հուսկ բանքը յղեց տնօրէն դոկտ. Արմէն Իւրնէշլեանը (խօսքին ամփոփումը

կարելի է տեսնել «Լրապոս»-ի առաջին էջին մէջ):

Հուսկ, ՄԱՀԱԵ Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեան մատուցեց օրհնութեան աղօթքը, որով փակուեցաւ հանդիսութիւնը:



2019-20-ի մանկապարտեզի ընթացաւարտները



2020-21-ի մանկապարտեզի ընթացաւարտները




Ակառակ տաճնապալի օրերուն եւ առցանց դասընթացքներու առթած դժուարութիւններուն, որոնցմէ գլխաւորը արտադասարանային գործունէութիւններու անդամալուծումը եղաւ, տարուան ընթացքին, տարբեր դասարաններու զանազան աշակերտներ մասնակցեցան գործունէութիւններու, մրցանքներու կամ դասընթացքներու եւ ստացան համապատասխան վկայագիրեր:



11-րդ դասարանի աշակերտուհիներ Փաթրիսիա Ապաճեան, Նարէ Գարամանուկեան, Էլվիրա Զէյթունցեան եւ Նոյեմի Պօղոսեան իրենց ուսուցիչին՝ պարոն Հրայր Տանակեօզեանի քաջալերանքով մասնակցեցան CFI հաստատութեան “Accounting Fundamentals” եւ “Reading Financial Statements” նիւթերու առցանց դասընթացքին եւ ստացան համապատասխան վկայագիրեր:

10-րդ դասարանի աշակերտները ստացան ՀԲԸՄ-ի Armenian Virtual College-ի «Հայ երաժշտութեան պատմութիւն» դասընթացքի աւարտական վկայագիր: ՀԱԳ-էն ներս իրենց առաջնորդն էր տիկին Անի Պիլալեան:



10-րդ եւ 11-րդ դասարանի աշակերտուհիներ Նարէ Գարամանուկեան, Էլվիրա Զէյթունցեան, Լոռի Գալուստեան եւ Մէրի Իշխանեան մասնակցեցան LAU համալսարանի “Model Good Governance” նախագիծին եւ ստացան մասնակցութեան հաստատագիրեր: Իրենց առաջնորդն էր 12-րդ դասարանի աշակերտուհի Այգ Արզումանեան:



Համազգայինի Թորոս Ռոսլին նկարչական ակադեմիայի կազմակերպած գծագրական մրցանքին մրցանակներ ստացան Մանէ Չոլագեան, Նարեկ Քէօշկերեան (9-րդ) եւ Անժելինա Սվաճեան (7-րդ):



Կը շնորհաւորենք աշակերտներուն մասնակցութեան կամքը եւ զիրենք հետաքրքրող ասպարէզներու մէջ աւելին իմանալու եւ սորվելու ճիգը:

ՀԱԳ-ի ծնողներէն պարոն Սեդրակ Գոյումճեան աննախընթաց արարքով մը 350 լիթր վառելիանիւթ ապահոված է Ռաֆիք Հարիրի պետական հիանդանոցին, երբ իմացած է, որ վառելիանիւթ տաճնապին պատճառով հիանդանոցին ելեկտրածին շարժակները չեն բանիր, անգործութեան մատնելով հիանդներու առողջութիւնը ապահովող ելեկտրական սարքերը: Պարոն Գոյումճեան, Թրիփոլիէն մինչեւ Պէյրութ երկարող 80 քմ. մայրուղիին վրայ գտնուող վառելիանիւթ հայթայթող կայաններուն առջեւ ժամերով կարգի սպասած է, լիթր առ լիթր վառելիանիւթ գնած ու նուիրած է հիանդանոցին:



Տեղին է նշել, որ Twitter-ի վրայ եւ այլապէս մեծ անդրադարձ եղաւ իր ըրածին, որոնց գլխաւորը հիանդանոցի ընդհանուր տնօրէնին շնորհակալութեան խօսքն էր, ուր ան կ'ըսէ. «այս դժուար օրերուն հազուագիւտ են այն մարդիկը, որոնք իրենց ստացածէն աւելի կու տան: Այս «տոտող»-ներն են որ կեանքը տանելի կը դարձնեն եւ աւելի լաւ ապագայի յոյս կը ներշնչեն»:

Պարոն Սեդրակին այս արարքը, արսափելի տաճնապի այս օրերուն, յոյսի եւ լոյսի իսկական շող մըն է եւ ապացոյց, որ ամէն անհատ կրնայ իր նպաստը բերել ընդհանուրին: Հարկ է նշել, որ ինք տարբեր ձեւերով մշտապէս կ'օժանդակէ նաեւ դպրոցի բարօրութեան, ինչպէս նաեւ արցախեան 44-օրեայ պատերազմի օրերուն բժշկական անհրաժեշտ սարքեր եւ պիտոյքներ ապահովելով զրկեց Հայաստան:

► 1978-ի շրջանաւարտ Թինա Շաքարեան նշանակուած է Վենետիկի Միջազգային ճարտարապետական ցուցահանդէսին (Biennale) Հայաստանի տաղաւարի պատասխանատու: Ան այժմ կ'օժանդակէ 1986-ի շրջանաւարտ ճարտարապետ Ալէն Ոսկերիչեանին՝ Վենետիկի մէջ ունենալիք ցուցադրութեան:



► «Պաշար» շաբաթաթերթը իր 11 Ապրիլ 2021-ի թիով կը յայտնէ թէ Հայաստան գոլէճի նախկին երկարամեայ աշակերտ դոկտ. Նուպար Աֆէեան՝ Flagship ընկերութիւններու խումբին հիմնադիրներէն եւ «Օրօրա» մրցանակը հաստատողներէն մին, նկատուած է աշխարհի մեծահարուստներէն մին՝ իր հարստութիւնը գնահատուելով մօտ. 3 միլիարտ տոլար:

► Ամերիկայի Հայ ասետարանչական ընկերակցութեան 101-րդ տարեկան համաժողովի ասարտին, ընկերակցութեան վարչական ընտրուած են 1970-ի շրջանաւարտ տղքք. Նազարէթ Տարագճեան եւ 1965-ի շրջանաւարտ տիկ. Պերճոնի Պարսումեան-Կիլիսեան՝ երեք տարուայ շրջանի մը համար:

► Հայ ասետարանչական համաշխարհային խորհուրդի տարեկան ժողովին 1980-ի շրջանաւարտ, Աթէքի Հայ ասետ. եկեղեցիի Հովի Վեր. Վիգէն Չոլագեան արխիներու թուայնացման ծրագրի պատասխանատու նշանակուած է:



► Մուսա Լեւոն հերոսամարտի ակնաստեա ֆրանսահայ ծովային սպայ Շարլ-Տիրան Թէքէեանի «Քառամեայ պատերազմը Արեւելքի մէջ» երկեզու (հայերէն-ֆրանսերէն) յուշագրական հատորին երկու մեկենասներէն մին է ՀԱԳ-ի 1955-ի շրջանաւարտ Զոհրապ Թագեան:

► 2010-ի շրջանաւարտ, Երեւանի պետական համալսարանէն հայագիտութեան Մագիստրոս արուեստից վկայականակիր Արմէն Պազգալեան մասնակիցներէն է



► 1969-ի շրջանաւարտ Գալուստ Կիլիպէնկեան հիմնարկութեան «Նորարար մշակոյթ» ծրագրին: Ան ստանձնած է լիբանանահայ թերթերու հին ծանուցումներուն սերտորոյթիւնը:



► Գալուստ Կիլիպէնկեան հիմնարկութեան «Նորարար մշակոյթ» ծրագրի առաջին մասնակիցներուն մէջ է նաեւ 2017-ի շրջանաւարտ Կարինէ Գիլիպէնկեան, որ ներկայիս կ'ամբողջացնէ մագիստրոսական տիտղոսի համար իր ուսումնասիրութիւնները Biodiversity Management-ի մէջ:

► Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը հրատարակեց «Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակի գիտաժողովի նիւթեր, 21-23 Մարտ 2018» խորագրեալ հատորը, որ կը պարփակէ Անթիլիասի մայրավանքին մէջ կայացած գիտաժողովի զեկուցում-յօդուածները, որոնց շարքին է դոկտ. Զաւէն Մարտիանի «Ղարաբաղը ինչպէս յանձնուեցաւ Ազրայէճանի



1918-121» ուսումնասիրութիւնը: Ժողովածուի շնորհանդէսը տեղի ունեցաւ 16 Մայիսին Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիային մէջ: Ձեռնարկին ներկայ էր նաեւ կաթողիկոսարանի դիւանապետ, 1980-ի շրջանաւարտ Խաչիկ Տէտէեան:

► 1957-ի շրջանաւարտ, ՀԱԳ-ի բարերարներէն գործարար Ալպեո Պեզճեան ՀԲԸՄ-ի Հայաստանի եւ Արցախի օգնութեան ֆոնտին նուիրած է 200,000 տոլար:

► 21 Մայիս 2021-ին Երեւանի «Զանգակ» գրատան մէջ տեղի ունեցաւ բանաստեղծ Խաչիկ Տէտէեանի «Երազէն անդին» բանաստեղծութիւններու երկհատորեակին շնորհանդէսը:



► ՀԱԳ-ի 2017-ի շրջանաւարտ Լոռի Եոնիսէս, 8 Յունիսին ԱՄՆ-ի Ուաշինկթընի ամերիկեան համալսարանէն ստացած է պակաւորի աստիճան Միջազգային յարաբերութեանց եւ Օրէնսգիտական ուսմանց մէջ, ինչպէս նաեւ վկայագիր մը դեկավարութեան մարզին մէջ՝ Բարձրագոյն պատուոյ եւ 2 այլ յիշատակութիւններով: Ան ստացած է նաեւ Պրուս Հյուզ աշակերտական իրագործման մրցանակը համալսարանի շրջանակին իր ծառայութեան համար: Լոռի նաեւ ամավերջի հանդէսին կարդացած է իր բաժինի ուղերձը:



► Մուսա Լեւոն հերոսամարտի ակնաստեա ֆրանսահայ ծովային սպայ Շարլ-Տիրան Թէքէեանի «Քառամեայ պատերազմը Արեւելքի մէջ» երկեզու (հայերէն-ֆրանսերէն) յուշագրական հատորին երկու մեկենասներէն մին է ՀԱԳ-ի 1955-ի շրջանաւարտ Զոհրապ Թագեան:

► 2010-ի շրջանաւարտ, Երեւանի պետական համալսարանէն հայագիտութեան Մագիստրոս արուեստից վկայականակիր Արմէն Պազգալեան մասնակիցներէն է



► 1969-ի շրջանաւարտ Գալուստ Կիլիպէնկեան հիմնարկութեան «Նորարար մշակոյթ» ծրագրին: Ան ստանձնած է լիբանանահայ թերթերու հին ծանուցումներուն սերտորոյթիւնը:

**ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԴԱՐՏՆԵՐԸ**

<b>ՐԷԱ ԷԲՍԵԹՃԻ (2015)</b> <b>MS/ECOSYSTEM MANAGEMENT</b>	AUB
<b>ՍԱՈՎ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ (2015)</b> <b>ARCHITECTURE AND DESIGN (HIGH DISTINCTION)</b>	LAU
<b>ՃՈՐՃ ՄԿՐՏԻՉԵԱՆ (2016)</b> <b>Economics</b>	UC Berkeley
<b>ԿԱՍԻՎ ԳԱԶԱՆՃԵԱՆ (2017)</b> <b>BUSINESS ADMINISTRATION</b>	HU
<b>ԴԱԼԱՐ ԳԱԶԵԶԵԱՆ (2017)</b> <b>HOSPITALITY AND EVENTS MANAGEMENT</b>	NDU
<b>ԼՈՌԻ ԵՈՒՆԻՎԵՍԻ (2017)</b> <b>BA/INTERNATIONAL RELATIONS AND LEGAL STUDIES (Summa Cum Laude)</b>	Univ. of Washington
<b>ԿԱՐԻՆ ԵՂԻՎՅԵԱՆ (2017)</b> <b>BIOMEDICAL SCIENCE</b>	LIU
<b>ՕՍԱՐ ԷԼ ԽԱԹԻՊ (2017)</b> <b>ELECTRICAL ENGINEERING</b>	BAU
<b>ՔԱԹՐԻՆԱ ՏՈՒՄԱՆԵԱՆ (2018)</b> <b>English Literature</b>	LU
<b>ՓԵՐԼԱ ՊԱՍԵԹ (2018)</b> <b>Nursing (HIGH DISTINCTION)</b>	LAU

**ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ**

«ԼՐԱՏՈՒ»-ի Նախորդ թիվն է Վեր շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները:

- «ԱՐԱ ՊԱԼԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՒՏԻՆ»**
- Տիկ. Սօսի Պալեան 500.000 լ.ն.
  - Տոքթ. Արման ԵԼ դոկտ. Արաքս Գրիգորեան 100 տոլար
  - Տիար Արմէն Պալեան 100 տոլար
- ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ**
- Lebanese Ladies Cultural Society 6100 տոլար
  - AMAA (Փետրուարէն Ապրիլ) 2624 տոլար
  - L.O. Խաչ 750.000 լ.ն.

**ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆՈՒԵՐ**

Հայաստան Համահայկական Հիմնադրամ 4215 տոլար


- ԱՅԼ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ**
- Մի ոմն 100 տոլար
  - Դոկտ. Զաւէն Մարրիեանի «ՀԱՅԵՐԸ ՀԱՍՏԵՍԱՐՀԱՅԻՆ Բ. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ» գրքին առ ի գնահատանք՝ Մի ոմն 25.000 լ.ն.
  - Տիկ. Անահիտ Փոլատեան 20.000 լ.ն.

**ՀԱԳ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄ**

Ողբ. Զաւէն Սայիլեանի յիշատակին 100.000 լ.ն.

Տէր ԵԼ տիկին Յակոբ ԵԼ Արին (Պաղտոյեան) Զերքեգեաններու դասեր ծնունդին առթիւ 100.000 լ.ն.

**Մ Ա Հ**



† 23 Մայիս 2021-ին Նիւ Զրր-գիի մէջ մահացած է 1968-ի շրջանաւարտ Յարութ Ծնոր-հօրեան (1950-2021):

**Պ Ս Ա Կ**

• Նախկին երկարամեայ աշակերտ Արէն Փոլատեան 12 Յունիս 2021-ին պակասած է օրիորդ Ռիթա Զէյթունեանի հետ, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ:

**ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ**

- 2012-ի շրջանաւարտ Նայիրի Գրիգորեան եւ ամուսինը՝ Թարէք Սոխրն, 17 Փետրուար 2021-ին բախարատրուած են առջինեկ մանչ զաւակով մը՝ Ժոզէֆ:
- 2010-ի շրջանաւարտ Ալին Արթինեան եւ ամուսինը՝ Հայկ Չիֆթճեան, 21 Յունիս 2021-ին բախարատրուած են առջինեկ մանչ զաւակով մը՝ Միկէլ:

Խմբագիր՝ ՏՆՕՐԵՆ ՊՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՐԻՆԵՇԵԱՆ  
 Խորհրդատուներ՝ Տիար ՆԵՐՍԵՆ ՊԱՐՏՈՅԵԱՆ  
 Տիար ՅԱԿՈԲ ՏԵՊԻՐՃԵԱՆ  
 Էջաղորւմ՝ Ասի ԲԵՏԵՆԵԱՆ-ՊԱՍԵԹ  
 Մ.Ա.Յ.Ա.Ե. Մոռոնեան Հոգևորական Գրասենյակ

**Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE**  
 P.O. Box 3672-Beirut  
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469  
 E-mail: A\_E\_C@cyberia.net.lb  
 Website: aecbeirut.edu.lb  
 Facebook: Armenian Evangelical College